ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/17

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով
Բողոք բերող՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, Տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 07.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին մասնակի փոփոխելու 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրությունը և վերացնել՝

1. «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին 4-րդ և 9-րդ չափաբաժինների վերաբերյալ պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը,
2. 4-րդ և 9-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 07.02.2022թ.-ին:

08.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 համարի ծածկագիրը:

16.02.2022թ.-ին և 04.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.03.2022թ.-ին:

2. **<u>«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն 07.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««1.1. ՀՀ ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 16.12.2021 թվականին հրապարակել է թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» էլեկտրոնային աճուրդը (այսուհետ նաև՝ գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից):

1.3. Գնման ընթացակարգին 4-րդ և 9-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը:

1.4. Պատվիրատուն վերոհիշյալ չափաբաժինների վերաբերյալ պայմանագիր կնքելու առաջարկությունը Մասնակցին ուղարկել է 14.01.2022 թվականին:

1.5. Մասնակիցը ստորագրված պայմանագիրը, որակավորման ապահովումը և տուժանքի մասին համաձայնությունները (այսուհետ նաև Փաստաթղթեր) Պատվիրատուին ներկայացրել է 01.02.2022 թվականին, փաստացի՝ սահմանված ժամկետից մեկ աշխատանքային օր ուշացմամբ:

1.6. Մասնակցի կողմից Պատվիրատուին փաստաթղթերը ուշ ներկայացնելը պայմանավորված է եղել պատասխանատու աշխատակցի՝ Սրբուհի Ալբերտի Պետրոսյանի անաշխատունակության մեջ գտնվելու հանգամանքով, ով հանդիսանում էր Մասնակից Ընկերությունում գնման ընթացակարգերի համակարգման մասնագետ և ուներ COVID 19 հիվանդության ախտորոշում և մեկուսացված էր դեռևս 01.02.2022 թվականի դրությամբ:

1.7. Պատվիրատուն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերով սահմանված ժամկետում Փաստաթղթերը չեն ներկայացվել, 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ Մասնակցին զրկել է պայմանգիր կնքելու իրավունքից և ի թիվս այլնի՝ չեղյալ է հայտարարել Գնման ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինները:

Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդված 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն,

մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Գնման ընթացակարգերի շրջանակում սահմանել է պայմանագրի կնքման համար հստակ ժամկետներ պայմանագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օր միևնույն ժամանակ սահամնելով դրա չկատարման արդյունքում պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելու հնարավորություն: Սունի համատեքստում պետք է փաստել, որ Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու ծանուցմանը առկայության դեպքում Մասնկցի մոտ ծագում է հանդիպական պարտավորություն այն 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրելու և Պատվիրատուին ներկայացնելու համար, և այդ ժամկետը ինքնին հանդիսանում իրավադադարեցնող ժամկետ, քանզի դրա խախտումը հանգեցնում է պայմանագիր կնքելու իրավունքից զրկելուն, այսինքն որոշակի իրավական հետևանքների վրա հասնելուն:

Պարտավորության պատշաճ չկատարման դեպքերում օրենսդիրը սահմանել է նաև պատասխանատվությունից ազատվելու իրավական հնարավորություններ երբ բացակայում է պարտավորությունը խախտած անձի մեղքը, այդ թվում նաև այն դեպքերում երբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Մասնակիցը սույն դեպքում ունենալով Գնման ընթացակարգի4-րդ և 9-րդ չափաբաժինների վերաբերյալ Պատվիրատուի ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու և Պատվիրատուին ներկայացնելու պարտավորություն այն կատարել է սահմանված ժամկետի խախտմամբ, սակայն այդ մասով բացակայել է Մասնակցի մեղավորությունը առկա անհաղթահարելի ուժի հետևանքով: Ըստ էության կնքված պայմանագիրը, որակավորման ապահովումը և տուժանքի վերաբերյալ համաձայնությունը Մասնակցիր Պատվիրատուին է ուղարկել

01.02.2022 թվականին մեկ աշխատանքային օր խախտումով, այսինքն այս դեպքում ոչ թե գործ ունենք պարտավորության չկատարման հետ՝ ինչպես նշել է

Պատվիրատուն, իր 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ, այլ անպատշաճ կատարման հետ, ուստի քննարկման առարկա պետք է դարձվի այն հանգամանքը, թե արդյոք Մասնակցի կողմից Փաստաթղթերը Պատվիրատուին սահմանված ժամկետի խախտմամբ չներկայացնելու մեջ առկա է արդյոք Մասնակցի մեղքը, թե ոչ և դրանով պայմանավորված կարող են արդյո՞ք վրա հասնել պատասխանատվության հիմքեր, որի արդյունքում Մասնակիցը կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից:

Պայմանավորված այն հանգամանքով, որ Մասնակից Ընկերությունում գնման ընթացակարգերի համակարգման մասնագետ՝ Սրբուհի Ալբերտի Պետրոսյան գտնվել է անաշխատունակության մեջ, պայմանավորված COVID 19 հիվանդությամբ և դեռևս 01.02.2022 թվականի դրությամբ գտնվել է մեկուսցման մեջ և եղել է վատառողջ, ուստի այդ հետևանքների վերացնելը եղել է անհնարին, իսկ Մասնակից Ընկերության գնման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությանը և կատարվելիք պարտավորությունների հստակ ժամկետներին տեյակ է եղել միայն տվյալ աշխատակիցը, ում բացակայությունը խոչընդոտել է պատշաճ կատարել սույն դեպքում առկա պարտավորությունը: Չնայած այդ ամենին Մասնակից Ընկերությունը ձեռնարկել է իրենից կախված ամեն ինչ և տեղեկանալով ժամկետների մասին անմիջապես ուղարկել է անհրաժեշտ Փաստաթղթերը Պատվիրատուին, իսկ գնման ընթացակարգերին մասնակցելու հայտերը բազմաթիվ են, ուստի դրանց տիրապետող անձի վատառողջ լինելը հանգեցրել է անհաղթահարելի իրավիճակի: Նշվածով պայմանավորված գտնում եմ, որ նախ Մասնակից Ընկերության կողմից ոչ թե՞ չեն կատարվել պարտավորությունները, այլ դրանք կատարվել են անպատշաճ, որի մեջ բացակայում է Ընկերության մեղքը, ուստի, չեն կարող վրա հասնել պատասխանատվության հետևանքներ, որի արդյունքում Մանսնակիցը կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին մասնակի փոփոխելու 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրությունը և վերացնել՝

1. «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին 4-րդ և 9-րդ չափաբաժինների վերաբերյալ պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը,
2. 4-րդ և 9-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին որոշումը:

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն 22.02.2022թ.-ի ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 ընթացակարգի շրջանակում էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ որով կհաստատվի, ոչ թե՞ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության կողմից պայմանագիր չկնքելու՝ այն է ստանձած պարտավորությունը չկատարելու այլ այն ուշացումով կատարելու հանգամանքը, որը եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում, քանզի «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունում գնումների գործընթացի համակարգման գործառույթներ իրականացնող աշխատակիցը եղել է COVID19 հիվանդությամբ վարակված և անաշխատունակության ժամկետի ավարտից հետո 8-րդ ինֆեկցիոն բաժանմունքի կողմից տրված էպիկրիզի համաձայն պետք է գտնվեր ինքնամեկուսացման մեջ նույնիսկ դրանից հետո, այսինքն առկա էր անհաղթահարելի ուժի ազդեցություն:»:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/2197-2022 գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 09.02.2022թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 16.12.2021 թ.-ին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սոֆթ Թրեյդ» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև՝ Մասնակից):

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն Հավելված N 1-ով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 Արձանագրության 10-րդ կետի համաձայն՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժիններով հայտարարվել է ընտրված մասնակից:

03.01.2022թ. «gnumner.am» կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացուցային օր:

Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում՝ 14.01.2022թ, գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով ընտրված մասնակցին է ներկայացրել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում Մասնակիցը չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

01.02.2022թ. հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ: Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում Մասնակիցը չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրերի ապահովումները և որոշվել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը

ստորագրելու իրավունքից և Ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինները Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային ժողով-ի կողմից տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 16.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն:

iii. «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

v. 03.01.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ նույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

vi. 14.01.2022թ.-ին Պատվիրատուն eauction.armeps.am համակարգի միջոցով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին:

vii. 01.02.2022թ.-ին «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am համակարգի միջոցով ստորագրվել է պայմանագիրը:

viii. Հանձնաժողովի 01.02.2022թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից և ընթացակարգը, այդ թվում նաև՝ 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, հայտարարել չկայացած:

x. 02.02.2022թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է 4-րդ և 9-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

xi. «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված 12.08.2021թ.-ի թիվ Ա-02/21 հրամանի համաձայն՝ 15.08.2021թ.-ից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին հանձնարարվել է կատարելու գնումների գործընթացի համակարգման գործառույթները:

xii. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի 8-րդ ինֆեկցիոն բաժանմունքի կողմից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին տրված էպիկրիզի համաձայն՝ վերջինս հիվանդացել է COVID 19 վարակով 06.01.2022թ.-ին, թեստավորվել է 11.01.2022թ.-ին և ընդունվել է բուժման, իսկ 20.01.2022թ.-ի դուրս է գրվել լավացումով:

xiii. Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին տրված անաշխատունակության թերթիկի համաձայն՝ վերջինիս անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբ է համարվում 11.01.2022թ.-ը, իսկ վերջը՝ 20.01.2022թ.-ը:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև

որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՀՀ Ազգային ժողովի կողմից տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 16.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 9.3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 16.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, ինչով պայմանավորված 03.01.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ նույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ

օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: 14.01.2022թ.-ին Պատվիրատուն eauction.armeps.am համակարգի միջոցով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին, որը վերջինիս կողմից ստորագրվել է 01.02.2022թ.-ին: Հանձնաժողովի 01.02.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից և ընթացակարգը՝ այդ թվում նաև 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, հայտարարել չկայացած, ինչի մասին 02.02.2022թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, հրապարակվել էվերոնշյալ չափաբաժինների մասով չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարություն:

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված 12.08.2021թ.-ի թիվ Ա-02/21 հրամանի համաձայն՝ 15.08.2021թ.-ից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին հանձնարարվել է կատարելու գնումների գործընթացի համակարգման գործառույթները: «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի 8-րդ ինֆեկցիոն բաժանմունքի կողմից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին տրված էպիկրիզի համաձայն՝ վերջինս հիվանդացել է COVID 19 վարակով 06.01.2022թ.-ին, թեստավորվել է 11.01.2022թ.-ին և ընդունվել է բուժման, իսկ 20.01.2022թ.-ի դուրս է գրվել լավացումով: Նույն անձին տրված անաշխատունակության թերթիկի համաձայն՝ վերջինիս անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբ է համարվում 11.01.2022թ.-ը, իսկ վերջը՝ 20.01.2022թ.-ը:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 16.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 01.02.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացնելով «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու և նույն չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումներ, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից պայմանագիրը eauction.armeps.am համակարգի միջոցով ստորագրվել է 01.02.2022թ.-ին, սակայն այն պետք է ստորագրվեր Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 31.01.2022թ.-ը ներառյալ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքի քննության ընթացքում ներկայացված՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի գնումների գործընթացի համակարգման գործառույթները իրականացնող աշխատակից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանի COVID 19 հիվանդությամբ վարակված լինելու արդյունքում անաշխատունակ լինելու և այդ անաշխատունակության արդյունքում առաջացած անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված Պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագիրն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չստորագրելու հանգամանքին, ապա, տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Սրբուհի Ալբերտի Պետրոսյանի COVID 19 հիվանդությամբ վարակված լինելու արդյունքում անաշխատունակ լինելու հանգամանքը չէր կարող հիմնավոր պատճառ լինել պայմանագիրը սահմանված ժամկետում չստորագրելու համար, քանի որ վերջինս COVID 19 վարակով ընդունվել է բուժման 11.01.2022թ.-ին, իսկ 20.01.2022թ.-ի դուրս է գրվել լավացումով՝ անաշխատունակության մեջ գտնվելով 20.01.2022թ.-ը ներառյալ, որպիսի պայմաններում վերջինս 21.01.2022թ.-ից 31.01.2022թ.-ը ներառյալ հնարավորություն ուներ ստորագրելու պայմանագիրը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չստորագրելով պայմանագիրը թույլ է տվել Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 36-րդ հոդվածի 3-րդ մասերով սահմանված դրույթների խախտում, իսկ գնահատող հանձնաժողովի կայացված որոշումները բխում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ

սահմանված պահանջներից, որպիսի պայմաններում «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 07.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**